ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 12.06.2019թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖԿ ծառայության պետ Ա. Պապյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖ ՇԲ առաջատար մասնագետ Ա. Սաֆարյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Սահակյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.
(Ա. Սահակյան)

1. Մասնակցի՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
(Ա. Սահակյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ «Աբակ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքերի՝

ա) Սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.1 կետի բ) պարբերությամբ նախատեսված Հավելված N 5.1-ով ներկայացված՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող տեխնիկական միջոցների մասին տեղեկանքում բացակայում է հրավերով պահանջվող էքսկավատորի պետհամարանիշի մասին տեղեկատվությունը:

բ) Չի ներկայացվել սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.1 կետի դ) պարբերությամբ նախատեսված Հավելված N 5.2-ը՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի՝ 12.06.2019թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը՝ «Աբակ» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, և 14.06.2019թ.-ին նիստը շարունակվել է:

29.05.2019թ.-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն՝ «Աբակ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններն առկա են և բավարարում են հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին:

1.2 14.06.2019թ.-ին, հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, գնահատող հանձնաժողովը որոշեց «Աբակ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից:

1.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/3» ծածկագրով բաց մրցույթի ընտրված մասնակցին՝ «Աբակ» ՍՊԸ-ին, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

1.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/3» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/3» ծածկագրով բաց մրցույթի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ, քան գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը, ժամը 11:00 ն. ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ա. Սաֆարյան
Գնումները համակարգող	Ա. Սահակյան